ՏԵՂԵԿԱՆՔ
ՀՀ ՄԱՐԶԵՐՈՒՄ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԷՔՍՏԵՌՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Կրթության պետական տեսչության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով և 9-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի՝ 2010 թվականի փետրվարի 4-ի № 31-Ա հրամանով հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության պետական տեսչության 2010 թվականի աշխատանքային ծրագրի 13-րդ կետը, ի կատարումն ՀՀ կրթության գլխավոր պետական տեսուչի 2010 թվականի հունիսի 4-ի№ 37-Ա կարգադրության ՀՀ մարզերի և Երևան քաղաքի էքստեռն ավարտական քննություններ կազմակերպելու իրավունք ունեցող հանրակրթական ուսումնական հաստատություններում, 2010թ. հունիսի 7-ից 20-ը ներառյալ, ՀՀ կրթության պետական տեսուչների կողմից ուսումնասիրվել է էքստեռն ավարտական քննությունների կազմակերպման և անցկացման համապատասխանությունը կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրությանը:

ՀՀ կրթության պետական տեսչության պետին Mulberry ծրագրով, էլեկտրոնային փոստով, կամ ֆաքսով պարբերաբար ներկայացվել է զեկույց ուսումնասիրության արդյունքների մասին:

Ուսումնասիրությանը ներգրավվել են մասնագետներ, կրթության հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

2009-2010 ուստարում ՀՀ մարզերի և Երևան քաղաքի էքստեռն պետական ավարտական քննություններ ընդունելու իրավունք ունեցող հանրակրթական ուսումնական հաստատությունների ցանկը հաստատվել է ՀՀ կրթության և գիտության նախարարի 24.03.2010թ. N 126-Ա/Ք հրամանով (հավելված 1):

2010 թվականին ՀՀ մարզերում և Երևան քաղաքում էքստեռն ավարտական քննություններ հանձնելու դիմում է ներկայացրել **357** դրսեկ, որից հիմնական ընդհանուր կրթության վկայական ստանալու համար՝ **49,** իսկ միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության ատեստատ՝ **308-ը**:

Հիմնական ընդհանուր կրթության վկայական ստանալու համար դիմում ներկայացրած դրսեկներից նվազագույն տարիք ունեցողը 14 տարեկան է, առավելագույնը՝ 33, միջին տարիքը՝ 21,5:

Միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության ատեստատ ստանալու համար դիմում ներկայացրած դրսեկներից նվազագույն տարիք ունեցողը 16 տարեկան է, առավելագույնը՝ 64, միջին տարիքը՝ 21.3:

Հիմնական և միջնակարգ կրթական ծրագրերին համապատասխան էքստեռն ավարտական քննությունները կազմակերպելու գործընթացը կարգավորվում է ՀՀ կրթության և գիտության նախարարի 2007 թվականի հունվարի 29-ի N39-Ն հրամանով հատատված «Էքստեռն փոխադրական և ավարտական քննություններ կազմակերպելու կարգի» պահանջների համաձայն (այսուհետ՝ էքստեռնի կարգ):

Նշված կարգի պահանջների համաձայն՝ էքստեռն ավարտական քննություններին կարող են մասնակցել և էքստեռնի կարգով հիմնական և միջնակարգ ընդհանուր կրթության պետական նմուշի ավարտական փաստաթուղթ ստանալ հանրակրթության համակարգից առնվազն մեկ տարի դուրս մնացած և ինքնակրթությամբ զբաղված անձինք:

Փաստաթղթային ուսումնասիրությունից պարզվել է.

- հիմնական ընդհանուր կրթության վկայական ստանալու համար դիմում ներկայացրած դրսեկների՝ հանրակրթական համակարգից դուրս մնալու ժամանակահատվածը կազմել է նվազագույնը 3 ամիս, առավելագույնը՝ 20 տարի, միջինը՝ 7 տարի:

• միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության ատեստատ ստանալու համար դիմում ներկայացրած դրսեկների՝ հանրակրթական համակարգից դուրս մնալու ժամանակահատվածը կազմել է նվազագույնը 7 ամիս, առավելագույնը՝ 46 տարի, միջինը՝ 6 տարի (հավելված 2):

Երևան քաղաքում, ՀՀ Շիրակի, Վայոց ձորի և Տավուշի մարզերում միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության ատեստատ ստանալու, իսկ Կոտայքի մարզում նաև հիմնական ընդհանուր կրթության վկայական ստանալու համար դիմած դրսեկների մի մասը 2009-2010 ուստարվա ընթացքում ազատվել են ուսումնական հաստատություններից ծնողի դիմումի համաձայն, բնակավայրը փոխելու, 160 ժամից ավել բացակայություն ունենալու պատճառներով:

ՀՀ Վայոց ձորի, Լոռու, Արագածոտնի և Կոտայքի մարզերում միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության ատեստատ ստանալու համար 2010 թվականին դիմած որոշ դրսեկներ հիմնական ընդհանուր կրթության վկայականն էքստեռնի կարգով ստացել են 2009 թվականին, իսկ Երևան քաղաքում դիմած մեկ դրսեկ հիմնական ընդհանուր կրթության վկայականն էքստեռնի կարգով ստացել է 2008 թվականին:

Էքստեռնի կարգի պահանջի համաձայն՝ քննություններին ՀՀ կրթության և գիտության նախարարության (այսուհետ՝ նախարարություն) թույլտվությամբ կարող են մասնակցել նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (այսուհետ՝ ԿԱՊԿՈՒ) անձինք:

Սույն թվականին հիմնական ընդհանուր կրթության վկայական ստանալու համար դիմել է ԿԱՊԿՈՒ մեկ դրսեկ (ՀՀ Տավուշի մարզ), իսկ միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության ատեստատ ստանալու համար՝ 2-ը (ՀՀ Գեղարքունիքի և Կոտայքի մարզեր): Երեք դրսեկնենրն էլ ունեն հենաշարժական համակարգի խախտում, վկայագրված չեն, սակայն առկա են համապատասխան բժշկական տեղեկանքները:

ՀՀ Տավուշի և Կոտայքի մարզերի ԿԱՊԿՈՒ դրսեկները ավարտական քննությունները հանձնել են ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանով հաստատված համապատասխան դպրոցներում, իսկ ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ քաղաքում բնակվող ԿԱՊԿՈՒ դրսեկը, հիմնական ընդհանուր կրթությունը ստացել է տնային ուսուցման ճանապարհով, ուստի ՀՀ կրթության և գիտության նախարարության առաջարկությամբ պետական ավարտական քննությունները հանձնել է Ճամբարակի հ.1 միջնակարգ դպրոցում, Գավառի ավագ դպրոցի փոխարեն:

Համաձայն էքստեռնի կարգի պահանջի էքստեռն քննություններ հանձնել ցանկացողները մինչև տվյալ ուսումնական տարվա մայիսի 5-ը ներառյալ դիմում են մարզկենտրոններում էքստեռն քննություններ ընդունելու իրավունք ունեցող դպրոցների տնօրեններին: Դիմումի հետ ներկայացվում է անձը հաստատող փաստաթուղթ, հիմնական ընդհանուր կրթության վկայական ստանալու համար՝ տեղեկանք նախնական կրթության մասին, միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության ատեստատ ստանալու համար՝ հիմնական ընդհանուր կրթության վկայականի բնօրինակը:

Դիմորդների ցուցակները և ներկայացված փաստաթղթերը մինչև մայիսի 10-ը ներկայացվում են նախարարություն, փաստաթղթերի ուսումնասիրության և սահմանված կարգին համապատասխան քննություններին թույլատրելու համար:

Փաստաթղթային ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ որոշ դեպքերում չի ապահովվել նշված պահանջների կատարումը:

ՀՀ մարզերի և Երևան քաղաքի դրսեկները դիմումները և պահանջվող փաստաթղթերը ներկայացրել են սահմանված կարգով՝ մինչև մայիսի 5-ը, բացառությամբ «FLEX» ծրագրի շրջանակներում ԱՄՆ-ի հանրակրթական դպրոցներում ուսանածների, որոնց ընդհանուր թիվը ՀՀ մարզերում և Երևան քաղաքում 37 է (հավելված 3):

ՀՀ մարզերի և Երևան քաղաքի բոլոր դրսեկները սահմանված կարգով ներկայացրել են անձը հաստատող փաստաթղթեր, բացառությամբ.

ՀՀ Վայոց ձորի մարզ. Մեկ դրսեկ ընդհանրապես չի ներկայացրել անձը հաստատող փաստաթուղթ (ծննդյան վկայական կամ անձնագիր), իսկ մյուս դրսեկը ներկայացրել է 2 անձնագիր նույն անունով և հայրանունով, տարբեր ազգանուններով: Անհրաժեշտ փաստաթղթերը լրացված էին անվավեր ճանաչված անձնագրի տվյալներով:

Բոլոր դրսեկները սահմանված կարգով ներկայացրել են նախնական կրթության վերաբերյալ տեղեկանքներն և հիմնական ընդհանուր կրթության վկայականների բնօրինակները, բացառությամբ.

Երևան քաղաք. Մեկ դրսեկի հիմնական ընդհանուր կրթության վկայականի բնօրինակի փոխարեն առկա են տեղեկանքներ՝ հիմնական դպրոցն ավարտելու, հիմնական ընդհանուր կրթության վկայական ստանալու, ինչպես նաև այն կորցնելու մասին:

ՀՀ Շիրակի մարզ. Մեկ դրսեկի հիմանական ընդհանուր կրթության վկայականի բնօրինակի փոխարեն առկա է տեղեկանք ՀՀ Շիրակի մարզի Գյումրու հ. 34 միջնակարգ դպրոցի 1989-1990 ուստարվա շրջանավարտներին հիմնական ընդհանուր կրթության վկայականներ չտրամադրելու և դրսեկի ավագ դասարաններում ուսումը շարունակելու, սակայն դպրոցը չավարտելու մասին:

ՀՀ Տավուշի մարզ. Մեկ դրսեկ նախնական կրթության մասին տեղեկանքը ներկայացրել է սահմանված ժամկետից ուշ՝ ՀՀ կրթության պետական տեսչության կողմից կատարված ուսումնասիրության առաջին օրը (հունիսի 7-ին):

Փաստաթղթային ուսումնասիրությունից պարզվել է նաև, որ ՀՀ Կոտայքի մարզում հիմնական ընդհանուր կրթության վկայական ստանալու համար դիմած դրսեկներից մեկի փատաթղթերում առկա է 1996 թվականի հուլիսի 4-ին ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի հ. 13 դպրոցի կողմից տրված հիմնական ընդհանուր կրթության վկայականն «անբավարար» գնահատականներով, սակայն դրսեկը նշված դպրոցի ութերորդ դասարանը փաստացի ավարտել է 1997 թվականին:

Երևանում միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության ատեստատ ստանալու համար դիմած դրսեկներից մեկի փաստաթղթերում նույնպես առկա է «անբավարար» գնահատականներով հիմնական ընդհանուր կրթության վկայական, որը տրվել է 1998 թվականին Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի կողմից:

Համաձայն էքստեռնի կարգի պահանջների՝ էքստեռն ավարտական քննություններն անցկացվում են ըստ նախարարության կողմից հաստատված ժամանակացույցի, որտեղ նշված են քննական առարկաները և նրանց անցկացման օրերը:

ՀՀ Արարատի և Լոռու մարզերում էքստեռն ավարտական քննություններ կազմակերպելու իրավունք ունեցող դպրոցների տնօրեններին տրամադրված ժամանակացույցերում միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության ատեստատ ստանալու համար հաստատված առարկայացանկում նշված է եղել «Հասարակագիտություն» առարկան (նախատեսված 15 քննական առարկայից մեկով ավելի): Նախարարության կողմից այդ վրիպակի մասին տնօրենները ժամանակին չեն իրազեկվել, որի արդյունքում կազմակերպվել են քննություններ նշված առարկայից:

Համաձայն նախարարության կողմից հաստատված քննական առարկաների ժամանակացույցի՝ բնագիտական 4 առարկաների համար նախատեսվել է 4 քննական օր: Համադրման արդյունքում պարզվել է նաև, որ ՀՀ Արարատի մարզում նշված 4 առարկաների քննությունների համար տնօրինության կողմից նախատեսվել է 5 օր:

Էքստեռնի կարգի պահանջների համաձայն էքստեռն ավարտական քննությունների ժամանակացույցով հաստատված ավարտական և պետական ավարատական 5 գրավոր քննությունների անցկացման ժամկետները համընկել և անցկացվել են ավարտական և պետական ավարտական քննությունների միասնական քննական օրերին՝ Գնահատման և թեստավորման կենտրոնի (այսուհետ՝ ԳԹԿ) կազմած թեստերով: Մնացած առարկաների քննական տոմսերը և առաջադրանքները, կազմել են դպրոցների համապատասխան մեթոդմիավորումները:

ՀՀ Լոռու և Կոտայքի մարզերը ոչ բոլոր քննական առարկաներից են ԳԹԿ-ի կողմից ստացել դրսեկների համար նախատեսված քանակով թեստեր: Դրանք պատճենահանելու պատճառով որոշ քննություններ սկսվել են ուշացումով:

ՀՀ կրթության պետական տեսչության կողմից իրականացված ուսումնասիրությամբ պարզվել է, որ, ըստ միասնական համակարգի, «Մաթեմատիկա» առարկայի քննությունը նշանակված է եղել սույն թվականի հունիսի 15-ին (սկիզբը ժամը 9.30, տևողությունը՝ 180 րոպե), իսկ ըստ էքստեռն ավարտական քննությունների ժամանակացույցի նույն օրը նշանակված է եղել նաև «Օտար լեզու» առարկայի բանավոր քննությունը՝ սկիզբը ժամը 11.00, ինչի հետևանքով որոշ դրսեկներ նույն օրը հանձնել են 2 քննություն:

Ավարտական էքստեռն քննությունները կազմակերպելու նպատակով դպրոցների տնօրենների համապատասխան հրամաններով հաստատվել են քննությունների ստուգող հանձնաժողովների և քննության ընթացքի կազմակերպիչների կազմերը:

Առանձին դեպքերում չեն ապահովվել ՀՀ կրթության և գիտության նախարարի 2007թ հունվարի 29-ի N39-ն հրամանով հաստատված <<Էքստեռն փոխադրական և ավարտական քննություններ կազմակերպելու կարգի>> 18-րդ կետի «ա», «բ» և «գ» ենթակետերի պահանջները. քննական հանձնաժողովները կազմում են դպրոցների տնօրենները հետևյալ սկզբունքով՝ 8-րդ (9-րդ) դասարանի համար՝ նախագահ և հանձնաժողովի 2 անդամ, 10-րդ (11-րդ) դասարանի համար՝ նախագահ և հանձնաժողովի երեք անդամ: Յուրաքանչյուր հանձնաժողովի կազմում առնվազն մեկ անդամ ընդգրկվում է մարզի այլ դպրոցներից, մարզպետարանի (Երևանի քաղաքապետարանի) կրթության վարչության ներկայացմամբ: Այսպես՝

ՀՀ Լոռու մարզ. 9-րդ դասարանի համար նախատեսված քննական հանձնաժողովները (բացառությամբ մեկ քննական առարկայի), հաստատվել են նախագահ և հանձնաժողովի 3 անդամ կազմով (2 անդամի փոխարեն): Մեկ քննական առարկայի քննական հանձնաժողովի կազմում այլ դպրոցից անդամ չի ընդգրկվել:

ՀՀ Տավուշի մարզ. 9-րդ դասարանի համար նախատեսված բոլոր քննական հանձնաժողովները հաստատվել են նախագահ և հանձնաժողովի 3 անդամ կազմով (2 անդամի փոխարեն):

ՀՀ Վայոց ձորի մարզ. Բոլոր առարկաների քննական հանձնաժողովների անդամներն ընտրվել են միայն դպրոցի մանկավարժական կազմից:

ՀՀ Արագածոտնի մարզ. 9-րդ և 11-րդ դասարանների համար նախատեսված քննական հանձնաժողովների անդամների քանակը գերազանցել է սահմանված թիվը:

Որոշ դեպքերում չի ապահովվել ՀՀ կրթության և գիտության նախարարի 11.05.2010թ. թիվ 359-Ա/Ք հրամանով հաստատված՝ «2009-2010 ուսումնական տարվա գիտելիքների ստուգման, ավարտական և պետական ավարտական քննությունների կազմակերպման աշխատակարգի» 6-րդ կետի պահանջը. քննասենյակներում քննական կենտրոնի ղեկավարի կողմից քննության ընթացքը կազմակերպելու համար նշանակված քննության ընթացքի կազմակերպիչները չեն կարող լինել տվյալ քննական առարկայի մասնագետներ, ինչպես նաև 30-րդ կետի պահանջը. 11-րդ դասարանում ստուգող հանձնաժողովի անդամները չեն կարող լինել տվյալ առարկայի մասնագետներ: Այսպես.

ՀՀ Լոռու մարզ. 9-րդ և 11-րդ դասարանների մեկական քննական առարկաների գրավոր քննությունների անցկացման կազմակերպիչների կազմում ընդգրկվել են քննական առարկաների մասնագետներ:

ՀՀ Արագածոտնի մարզ. 11-րդ դասարանի պետական ավարտական քննությունների թեստային աշխատանքները ստուգող հանձնաժողովի կազմում ընդգրկվել են տվյալ առարկաների մասնագետներ:

Արդյունքում՝

Հիմնական կրթական ծրագրերին համապատասխան էքստեռն ավարտական քննություններին մասնակցելու դիմում ներկայացրած **49 դրսեկներից 2010 թվականին հիմնական ընդհանուր կրթության վկայական կստանան 32-ը.** 10 դրսեկ

ընդհանրապես չեն ներկայացել քննություններին, 7-ը չի ներկայացել 1 կամ մի քանի քննության: Անբավարար գնահատվել է 1 դրսեկ, որը նաև ոչ բոլոր քննություններին է ներկայացել (հավելված 4):

Համաձայն էքստեռնի կարգի պահանջների նախորդ տարում էքստեռնի կարգով ավարտական քննություններ հանձնած դրսեկների ստացած դրական գնահատականները պահպանվում են և նրանք քննություններ են հանձնում միայն այն առարկաներից, որոնցից քննություններ չեն հանձնել կամ ստացել են անբավարար գնահատականներ:

ՀՀ Կոտայքի մարզում մեկ դրսեկ հիմնական կրթության վկայական ստանալու համար 2009 թվականին մասնակցել է էքստեռն ավարտական 3 քննության: Քանի որ այդ մասին դրսեկը տեղեկատվություն չի ներկայացրել (նախորդ և ներկա քննական կենտրոնները տարբեր են եղել), ուստի 2010 թվականին վերջինս քննություններ է հանձնել նաև նախորդ տարվա դրական հանձնած որոշ առարկաներից:

Միջնակարգ կրթական ծրագրերին համապատասխան էքստեռն ավարտական քննություններին մասնակցելու դիմում է ներկայացրել **308 դրսեկ**, որից **262-ը** դիմել է պետական ավարտական քննությունները **ավարտական համակարգով** հանձնելու համար, **31-ը**՝ որոշ առարկաներ **1-ին հայտով միասնական համակարգով** հանձնելու համար, և **15 դրսեկ՝** «**FLEX**» ծրագրով ուսանած անձիք, որոշ առարկաներ **2-րդ հայտով միասնական համակարգով** հանձնելու համար (հավելված 3):

Ավարտական համակարգով էքստեռն քննություններին մասնակցելու համար դիմած **262** դրսեկներից **31-ն** ընդհանրապես չի մասնակցել պետական ավարտական քննություններին, **56-ը** չի մասնակցել մեկ կամ մի քանի առարկաների քննությունների:

Մեկ կամ մի քանի առարկաներից անբավարար են գնահատվել **59 դրսեկ**, որոնցից **34-ը** անբավարար գնահատված այն դրսեկներն են, որոնք նաև չեն մասնակցել մեկ կամ մի քանի պետական ավարտական քննությունների:

Ավարտական համակարգով պետական ավարտական բոլոր քննություններին մասնակցած **175 դրսեկներից 150-ը դրական են գնահատվել քննական բոլոր առարկաներից, 25-ն՝ անբավարար** մեկ կամ մի քանի քննական առարկաներից (հավելված 5):

Արդյունքում 2010 թվականին միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության ատեստատ կստանան

150 դրսեկ՝ ավարտական համակարգով հանձնած քննությունների արդյունքում

31 դրսեկ՝ միասնական համակարգով 1-ին հայտով հանձնած քննությունների տվյալների հրապարակման արդյունքում (ավարտական շեմը հաղթահարելու դեպքում),

15 դրսեկ՝ միասնական համակարգով 2-րդ հայտով հանձնած քննությունների տվյալների հրապարակման արդյունքում (ավարտական շեմը հաղթահարելու դեպքում):

ՀՀ կրթության պետական տեսչության կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքում վեր են հանվել տարաբնույթ անհամապատասխանություններ, խնդիրներ, որոնք առանձին փաթեթով կներկայացվեն ՀՀ կրթության և գիտության նախարարին:

Հավելված 1

ՀՀ մարզերի և Երևան քաղաքի էքստեռն պետական ավարտական քննություններ ընդունելու իրավունք ունեցող հանրակրթական ուսումնական հաստատությունների ցանկ	
Երևան	Երևանի թիվ 112 ավագ դպրոց
ՀՀ Շիրակի մարզ	Գյումրու թիվ 2 միջնակարգ դպրոց
ՀՀ Լոռու մարզ	Վանաձորի թիվ 15 միջնակարգ դպրոց
ՀՀ Արարատի մարզ	Արտաշատի թիվ 5 ավագ դպրոց
ՀՀ Արմավիրի մարզ	Արմավիրի թիվ 4 միջնակարգ դպրոց
ՀՀ Արագածոտնի մարզ	Աշտարակի թիվ 5 ավագ դպրոց
ՀՀ Կոտայքի մարզ	Հարազդանի թիվ 8 միջնակարգ դպոց
ՀՀ Սյունիքի մարզ	Կապանի թիվ 9 ավագ դպրոց
ՀՀ Գեղարքունիքի մարզ	Գավառի ավագ դպրոց
ՀՀ Տավուշի մարզ	Իջևանի թիվ 1 միջնակարգ դպրոց
ՀՀ Վայոց ձորի մարզ	Եղեգնաձորի թիվ 1 միջնակարգ դպրոց

Հավելված 2

Մարզ/քաղաք	Տեղեկություններ էքստեռն ավարտական քննություններ հանձնելու դիմում ներկայակացրած դրսեկների վերաբերյալ													
	Հիմնական կրթության							Միջնակարգ կրթության						
	Դրսեկների ընդհանուր թիվը	Տարիքը			Քանի տարի է համակազմից դուրս է մնացել			Դրսեկների ընդհանուր թիվը	Տարիքը			Քանի տարի է համակազմից դուրս է մնացել		
		Նվ.	Առ.	Միջ.	Նվ.	Առ.	Միջ.		Նվ.	Առ.	Միջ.	Նվ.	Առ.	Միջ.
Երևան	**8**	15	31	**19**	1	16	**5**	**66**	16	64	**22**	2	46	**7**
Արարատ	**5**	21	26	**23**	7	11	**9**	**40**	16	32	**24**	1	17	**8**
Արմավիր	**8**	14	27	**19**	1	12	**5**	**58**	16	36	**19**	2	21	**4**
Արագածոտն	**1**	15	15	**15**	1.5	1.5	**1.5**	**12**	17	33	**21**	1	19	**8**
Կոտայք	**14**	16	33	**21**	3 ամիս	20	**6**	**34**	16	34	**22**	1	19	**7**
Գեղարքունիք	**1**	29	29	**29**	14	14	**14**	**6**	17	20	**17.2**	2	5	**3**
Տավուշ	**1**	18	18	**18**	3	3	**3**	**17**	16	37	**21**	2	15	**5**
Սյունիք	**0**	0	0	**0**	0	0	**0**	**8**	16	31	**21**	1	16	**5**
Վայոց ձոր	**1**	27	27	**27**	14	14	**14**	**15**	16	31	**25**	2	16	**8**
Շիրակ	**4**	18	31	**24.5**	1	17	**9**	**22**	16	38	**19.6**	2	23	**3.9**
Լոռի	**6**	17	29	**19**	1	15	**5**	**30**	16	37	**23**	2	22	**8**
Ընդամենը	**49**	14	33	**21.5**	0.3	20	**7**	**308**	16	64	**21.3**	1	46	**6**

Ամփոփ տվյալներ միջնակարգ կրթական ծրագրերին համապատասխան էքստեռն ավարտական քննությունների անցկացման վերաբերյալ

Հավելված 3

№	Մարզի անվանումը	Էքստեռն ավարտական քննություններին մասնակցելու դիմում ներկայացրած դրսեկների ընդհանուր թիվը	Ավարտական համակարգով էքստեռն քննություններին մասնակցող դրսեկների ընդհանուր թիվը	Միասնական համակարգով պետական ավարտական քննություն ներին մասնակցող դրսեկների ընդհանուր թիվը	«FLEX» ծրագրի շրջանակներում ԱՄՆ-ի հանրակրթական դպրոցներում ուսանած դրսեկների ընդհանուր թիվը	«FLEX» ծրագրի շրջանակնե ում ուսանած և 2-րդ հայտով միասնական համակարգով պետական ավարտական քննություններին մասնակցող դրսեկների ընդհանուր թիվը
1	Երևան	66	60	3	17	3
2	Արարատ	40	40	0	0	0
3	Լոռի	30	30	0	3	0
4	Գեղարքունիք	6	5	0	1	1
5	Սյունիք	8	4	0	5	4
6	Արմավիր	58	37	21	0	0
7	Շիրակ	22	15	1	7	6
8	Արագածոտն	12	11	1	0	0
9	Վայոց Ձոր	15	14	0	1	1
10	Տավուշ	17	12	5	0	0
11	Կոտայք	34	34	0	3	0
Ընդամենը		**308**	**262**	**31**	**37**	**15**

Ամփոփ տվյալներ հիմնական կրթական ծրագրերին համապատասխան էքստեռն ավարտական քննությունների անցկացման վերաբերյալ

Հավելված 4

№	Մարզի անվանումը	Էքստեռն ավարտական քննություններին մասնակցելու դիմում ներկայացրած դրսեկների ընդհանուր թիվը	Էքստեռն ավարտական բոլոր քննություններին չներկայացած դրսեկների ընդհանուր թիվը	Էքստեռն ավարտական 1 կամ մի քանի քննությունների չներկայացած դրսեկների ընդհանուր թիվը	Էքստեռն ավարտական 1 կամ մի քանի քննությունների չներկայացած և անբավարար գնահատված դրսեկների ընդհանուր թիվը	Էքստեռն ավարտական բոլոր քննություններին մասնակցած դրսեկների ընդհանուր թիվը	Էքստեռն ավարտական բոլոր քննություններին մասնակցած և 1 կամ մի քանի քննություններից անբավարար գնահատված դրսեկների ընդհանուր թիվը	Էքստեռն ավարտական բոլոր քննություններից դրական գնահատված դրսեկների ընդհանուր թիվը
1	Երևան	8	2	1	0	5	0	5
2	Արարատ	5	0	1	0	4	0	4
3	Լոռի	6	2	1	0	3	0	3
4	Գեղարքունիք	1	0	0	0	1	0	1
5	Սյունիք	0	0	0	0	0	0	0
6	Արմավիր	8	0	0	0	8	0	8
7	Շիրակ	4	2	1	0	1	0	1
8	Արագածոտն	1	0	0	0	1	0	1
9	Վայոց ձոր	1	0	0	0	1	0	1
10	Տավուշ	1	0	0	0	1	0	1
11	Կոտայք	14	4	3	1	7	0	7
Ընդամենը		**49**	**10**	**7**	**1**	**32**	**0**	**32**

Ամփոփ տվյալներ միջնակարգ կրթական ծրագրերին համապատասխան էքստեռն ավարտական քննությունների անցկացման վերաբերյալ

Հավելված 5

№	Մարզի անվանումը	Էքստեռն ավարտական քննություններին մասնակցելու դիմում ներկայացրած դրսեկների ընդհանուր թիվը	Ավարտական համակարգով էքստեռն քննություններին մասնակցող դրսեկների ընդհանուր թիվը	Էքստեռն ավարտական բոլոր քննություններին չներկայացած դրսեկների ընդհանուր թիվը	Ավարտական համակարգով 1 կամ մի քանի էքստեռն քննությունների չներկայացած դրսեկների ընդհանուր թիվը	Ավարտական համակարգով 1 կամ մի քանի էքստեռն քննությունների չներկայացած և անբավարար գնահատված դրսեկների ընդհանուր թիվը	Ավարտական համակարգով էքստեռն բոլոր քննություններին մասնակցած դրսեկների ընդհանուր թիվը	Ավարտական համակարգով բոլոր քննություններին ներկայացած և 1 կամ մի քանի քննություններից անբավարար գնահատված դրսեկների ընդհանուր թիվը	Ավարտական համակարգով էքստեռն բոլոր քննություններից դրական գնահատված դրսեկների ընդհանուր թիվը
1	Երևան	66	60	0	14	9	46	4	42
2	Արարատ	40	40	0	16	16	24	14	10
3	Լոռի	30	30	17	9	7	4	1	3
4	Գեղարքունիք	6	5	0	0	0	5	0	5
5	Սյունիք	8	4	0	0	0	4	0	4
6	Արմավիր	58	37	0	0	0	37	4	33
7	Շիրակ	22	15	1	0	0	14	0	14
8	Արագածոտն	12	11	3	0	0	8	0	8
9	Վայոց Ձոր	15	14	3	6	1	5	1	4
10	Տավուշ	17	12	0	6	1	6	0	6
11	Կոտայք	34	34	7	5	0	22	1	21
Ընդամենը		**308**	**262**	**31**	**56**	**34**	**175**	**25**	**150**